ասա՝ երկու ոսկի ևս այն տեղ կանգնող ծառաներուն տուաւ՝ ասաց.

—Դէ՝ իմ ձին քաշէք՝ որ իմ հարս առնիմ իմ թալք՝ պտի տանիմ՝ էլ կենալու դախ չէ։

Ժողոված մարդեր իրարու երես կը նային զարմացած։

«Ցо՝ Ցէրտէր Ջան՝ խօսքս խօսք ա՝ մէ անգամ խօսք տուի։ Ցо՝ աղքատ՝ ես գինայի որ քու տակդ բան կայ՝ յըմա էղաւ՝ առ գնայ. հալալ եղնի քըզի իմ աղջիկ»՝ ասաց Հայրան։

Ցէրտէր դեռ պահպանիչ չէր ասած՝ ջոջեր դեռ զարմացած վիճակի մէջ իրար երես կը նայէին՝ Զախոն իւր ձիու կռնակն էր՝ Հայրան ևս իւր աղջիկը կը բարձրացնէ նորա դաւակը։

Զախոյի փոքրիկ ձին ճեղքելով անցած էր Պուրատ գետը՝ մի ժամ գիւղից հեռուն կը տեսնուէր՝ բայց գիւղից ցարդ ոչ ոք չէր իմացած։

—«Ցо՝ տղայ՝ ասաց աղջկան մայրը իւր մեծ տղին՝ ձին թամքէ՝ հասիր՝ տես դո՞ր կը տանայ՝ իդմիա բան էլ կեղնի՝ Աստուած էս ինչ խաբար ա»

Ով կարող էր Հայրանի առջև մի բան ասել՝ ամբողջ ընտանիքը թաց աչքով «երթաս բարով» ևս չը-կարողացան ասել։

—Հեծնելու դախուն ընծի ըսեց թէ ես Ամատցի եմ՝ ասաց ծառաներէն մէկն։

—Ղեղնի դէ ինա դոլվաթուոր Զախոն էղնի՝ ասաց ծառաներէն մէկն։—Զախոն ա՝ Զախոն՝ ասացին ամենքը։

—Որ կեղնի Աստուած ուր բան յաջողայ՝ ասաց Հայրան՝ Աստուած ընդրա զամաթ էրած էր։

Եօթ օր յետոյ գացին մէկ երկու տղայ Ամատ՝